

Վարուժան կ'երգէ Աղէտին հետ դիւցազուններն ալ՝
որոնք անոր դէմ կ'ոտխին, յետոյ կ'երազէ իր հայրենի
օճախը, ու ներկայէն յուսահատ՝ կ'անդրադառնայ լու-
սաւոր անցեալին. կ'ոգեկոչէ Անին, կ'ոգեկոչէ հեթանոս
դարերու կեանքն ու աստուածներուն ուժը:

Ահա տողեր *Անիէն*'

*Արդ քարուքանդ կը հանգչիս,
Եւ նըշխարներդ ինը դար է որ կ'ապրին.
Ժամանակին ձեռքը չեղաւ այնքան յաղթ
Աճիւններդ այդ մըրրիկներուն յանձնելու.
Մնբատի սօս նըժոյգը չի՛ խըրխընջեր,
Ան չի թօթուեր արինթաթախ բաշերն իր
Քած ձիուն դէմ Ափշինի,
Ու կոչնակներն ու շեփորներն ոսկեցոյ՝
Որոնց ի լուր թուրը խաչով կը ձուլուէր,
Հոն լըռած են՝ ապրեցնելով իրենց տեղ
Բուի հազար սերունդներ:
Արդ լըռութեան չըղջիկի լայն թեւին տակ
Կ'աճի եղիճն արտասուքովն աստղերուն.
Եւ հոն բաղեղն հայրենասէր թեւերով
Կը գըրկէ հողըդ տըրտում
Իր պատառիչ կայծքարերով միասին:*

Լէօբարտիի *Առ Իտալիան*²¹ Վարուժանի *Անիէն* գեղեցիկ չէ:
Ըսի թէ ներկայէն յուսակտուր դէպի անցեալ կը դառնայ
իւր հոգին ու իր արդէն իսկ հեթանոսական հոգւոյն մէջ ֆլա-
ման պերճ արուեստին ազդեցութեամբ կ'երկնուին հնույթե-
ան աստուածութիւնները: Եւ որպէս զի *Յեղին սիրտը* իս-
կապես հայ տառապանքին սիրտը ըլլայ, Վարուժան անոնց
ուժը կ'աղերսէ, անոնց բազուկները յաղթ՝ արդի մոայլ ու-
ժերուն, արդի վայրագ սպանդներուն դէմ: *Վահագն* զմայ-
լելի քերթուածէն սա հաստուածը՝ կուտայ մեզի այդ կոչը.

*Ուժի՛ն համար, կրօնքի՛ն համար բազուկիդ,
Որով դու օր մը պատռեցիր բերաններ*